«Զվարթնոց Վերածնունդ» հիմնադրամ
Հեռ.՝ +374 77 349 -795, +374 41 777-880
Էլ. Հասցե՝ zvartnenfoundation@gmail.com

Фонд «Звартноц Возрождения»
Tel.: +374 77 349 795, +374 41 777-880
Эл. Почта: zvartnenfoundation@gmail.com

«Zvartnots Renaissance» Foundation
Phone: +374 77 349 795, +374 41 777-880
E-mail: zvartnenfoundation@gmail.com

28.03.2019

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Նախարար Արայիկ Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան,

2012 թ-ից «Զվարթնոց Վերածնունդ» հիմնադրամը ՀՀ բոլոր մարզերում, ԼՂՀ-ում կազմակերպում և իրականացրում է «Զվարթնոց» խորագրով հայ դասական, ժողովրդական, հոգևոր երգի պահպանում ու տարածում մրցույթ-փառատոն ծրագիրը:

Մրցույթը ներառում է հայ երգի 3 ժանր՝ դասական, ժողովրդական և էստրադային:

Ծրագրի նպատակը

Հիմնական նպատակն է երիտասարդ սերնդի մեջ ժամանակակից մեթոդներով, ոչ ֆորմալ կրթությամբ սերմանել ու պահպանել հայ ազգային, ժողովրդական, դասական, հոգևոր, էությունում ամրապնդված, կոմիտասյան երգը, հատկապես երաժշտական կրթություն չունեցողների և նյութապես անապահով պատանիների և երիտասարդների համար:

Այս ծրագիրը ոչ միայն հայ ազգային արժեքներն է փոխանցում երիտասարդ սերնդին, այլ նաև մեծ հնարավորություններ է ստեղծում տաղանդավորների համար կատարել իրենց առաջին քայլերը երգարվեստում, հանդես գալ համերգներով ՀՀ-ում և արտերկրում: Այս տարիների ընթացքում, որպես ծրագրի արդյունք, ստեղծվել է «Զվարթնոց» հայ երգի խումբը, որը համերգներով շրջագայել է մի շարք երկրներում:

2018 թվականի դեկտեմբեր ամից մեկնարկել է նոր մրցույթի մարզային փուլը:

Այս տարի առաջին անգամ նախատեսվում է մրցույթում մարզերի հետ միասին ընդգրկել Երևանը: Նախատեսում ենք յուրաքանչյուր վարչական շրջանից նախնական ունենալ 100 մասնակից, մրցույթի փուլ կանցնեն յուրաքանչյուր վարչական շրջանից 30 լավագույն մասնակիցները:

Հարգելի պարոն Նախարար,

Ակնկալում ենք ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությունը՝ մրցույթում Երևանը ընդգրկելու հարցում, մասնավորապես՝

- ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության կրթական օջախների շրջանակում տեղեկատվության տարածում (շրջաբերականների ուղարկում),

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք No 13277-19
«28» 03 2019 թ.

- հնարավորության դեպքում կրթական օջախների ցանկի և տվյալների տրամադրում:

Ուրախ կլինենք, եթե ընձեռվի հնարավորություն հանդիպելու ու ներկայացնելու ամբողջական ծրագիրը և քննարկելու համագործակցության հնարավոր տարբերակները:

<u>Նամակին կից ներկայացնում ենք մրցույթ-փառատոնի կանոնակարգն ու հայտաձևը:</u>

Հիմնադրամի մասին

«Զվարթնոց Վերածննդի» հիմնադրամը ստեղծվել է 2011 թվականին:

Հիմնադրամի առաքելությունն է ազգային արժեքների արմատավորումը, հոգևոր-մշակութային արժեքների վերարտադրումը, պատմամշակութային հուշարձանների վերականգնումը, հոգևոր դասական և ժող. երգերի տարածումը:

Հիմնադրամի գործունեությունը.

- 2013թ. օգոստոսին Բուլղարիայի Սոֆիա քաղաքում «Զվարթնոց» խումբը մասնակցեց համաշխարհային «Folklore Festival» փառատոնին և գրավեց 1-ին տեղը՝ Հայաստան վերադառնալով ոսկե մեդալով: Խումբը համերգներով հանդես է եկել Հայաստանի և Արցախի 35 համայքներում՝ թվով 80 համերգ, արտասահմանյան 9 պետությունների 21 քաղաքներում՝ թվով 29 համերգ: Ընդհանուր՝ 2013 թ-ից 109 համերգ և շուրջ 45180 հանդիսատես:
- Հիմնադրամը մեծ ուշադրություն է դարձնում հատկապես «խոնարհված» պատմամշակութային հուշարձաններին և եկեղեցիներին: Այս նպատակով հիմնադրամը նկարահանել է «Խոյակ» ֆիլմ, որտեղ պատմվում է Արագածոտնի մարզի խոնարհված եկեղեցիների մասին:
- Նկարահանվել է նաև «Կամուրջներ» ֆիլմը, որտեղ պատմվում է Երուսաղեմի հայկական համայնքի մասին:
- Հիմնադրամի կարևորագույն նախաձեռնություններից է «Պատարագը՝ բեմից» ծրագիրը, մեկնարկել է 2012 թ.ին: Այն ունի ուսուցողական բնույթ և նպատակ ունի հանրությանը ծանոթացնել հայկական պատարագին, նրա պատմությանը, երաժշտաձիսական արարողակարգի կատարման առանձնահատկություններին: Միջոցառման ընթացքում հրավիրյալ հոգևորական-բանախոսը հերթականությամբ ներկայացնում և բացատրում է Հայ առաքելական եկեղեցու Սուրբ Պատարագի արարողակարգի մասին, իսկ երգչախումբը կատարում է Պատարագից հատվածներ (Եկմալյան, Կոմիտաս):

«Զվարթնոց Վերածննդի» հիմնադրամ
«Զվարթնոց» հայ երգի
մրցույթ-փառատոն ծրագրի ղեկավար
Քնարիկ Ղազարյան
Հեռ. 077 34 97 95
Էլ. հասցե՝ zvartrenfoundation@gmail.com

ՀԻՄՆԱԴՐԱՄ ՓԵՏԿԱ FOUNDATION 01846987

«Զվարթնոց Վերածննդի» հիմնադրամ
Հեռ.՝ +374 77 349 -795, +374 41 777-880
Էլ. հասցե՝ zvartrenfoundation@gmail.com

Фонд «Звартноц Возрождения»
Tel.: +374 77 349 795, +374 41 777-880
Эл. Почта: zvartrenfoundation@gmail.com

«Zvartnots Renaissance» Foundation
Phone: +374 77 349 795, +374 41 777-880
E-mail: zvartrenfoundation@gmail.com

«Զվարթնոց» հայ երգի մրցույթ-փառատոն

2012թ-ից. «Զվարթնոց Վերածննդի» հիմնադրամը ՀՀ բոլոր մարզերում, ԼՂՀ-ում կազմակերպել և իրականացրել է «Զվարթնոց» խորագրով հայ դասական, ժողովրդական, հոգևոր երգի պահպանում ու տարածում» ծրագիրը, որի գլխավոր նպատակն է հայ երիտասարդներին վերդարձնել իրենց ակունքներին:

Ծրագրի նպատակը

«Զվարթնոց» հայ երգի մրցույթ–փառատոնն իրականացվում է 2012թ.-ից մինչ այսօր: Հիմնական նպատակն է երիտասարդ սերնդի մեջ ժամանակակից մեթոդներով, ոչ ֆորմալ կրթությամբ սերմանել ու պահպանել հայ ազգային, ժողովրդական, դասական, հոգևոր, էությունում ամրապնդված, կոմիտասյան երգը, հատկապես երաժշտական կրթություն չունեցողների և նյութապես անապահով պատանիների և երիտասարդների համար: 2012-2013թթ. Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում (43 քաղաքներում) տեղի ունեցավ «Զվարթնոց» հայ երգի մրցույթ–փառատոնը, որին մասնակցեցին 3 000 երիտասարդներ, պատանիներ, ինչ 2016 – 2017թթ. մրցույթ-փառատոնը ստացավ 1000-ից ավելի հայտեր: Ելնելով պահաջարկից՝ մրցույթ-փառատոնը դարձավ երկամյա:

Ծրագրի խնդիրները

- Հնարավորություն ընձեռել երիտասարդներին նա մեկ անգամ ծանոթանալու հայ երգին
- Ակտիվացնել ՀՀ մարզերի, հատկապես սահմանամերձ գոտիների մշակութային կյանքը, ծրագրում ներգրավել տեղի բնակչությանը
- Խրախուսել երիտասարդներին դառնալ հայ մշակույթի կրողները և տարածողները
- Բացահայտել հայ տաղանդաշատ երիտասարդներին
- Աջակցել երիտասարդներին՝ առաջին քայլերը կատարելիս
- Խթանել ՀՀ տարածաշրջանի երիտասարդների միջև փոխհամագործակցութ-յունը

Ծրագիրն իրականացվում է նաև 2018-2019 թվականներին:
Մրցույթին կարող են մասնակցել 8 - 32 տարեկան յուրաքանչյուր անձ:
Մրցույթի ընթացքում երիտասարդները ներկայացնելու են հայ երգի ժանրերից՝ դասական, ժողովրդական և էստրադային: Մրցույթ-փառատոնի էստրադային ժանրն այս տարի կանվանվի Շարլ Ազնավուրի անվամբ, ի հիշատակ աշխարհահռչակ շանսոնյե Շարլ Ազնավուրի, և էստրադային ժանրի ծրագրում կընդգրկվեն երգեր Շարլ Ազնավուրի երգացանկից: Ծրագրի 3 ժանրերում պարտադիր է կատարել Կոմիտասի մեկ ստեղծագործություն:

«Զվարթնոց» հայ երգի մրցույթ-փառատոնի
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել Սփյուռքի, Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ում բնակվող՝ յուրաքանչյուր պատանի և երիտասարդ: Մրցույթ-փառատոնի ընթացքում մասնակիցները ներկայացնելու են հայ երգի ժանրերից՝ դասական, ժողովրդական, էստրադային: Ծրագրում մեկ կատարումը պարտադիր պետք է լինի Կոմիտասի երգացանկից:
- Մրցույթ-փառատոնն անցկացվում է՝ 8 – 32 տարիքային խմբի համար և 3 անվանակարգերով՝ դասական, ժողովրդական և էստրադային:
- Ելույթների հաջորդականությունը կորոշվի այբբենական հերթականությամբ և կպահպանվի բոլոր փուլերի ընթացքում:
- Բոլոր փուլերը տեղի կունենան հրապարակայնորեն:
- Ժյուրին գնահատում է 1 - 10 բալանի սանդղակով:
- «Զվարթնոց վերածննդի» հիմնադրամը իր կայքում, սոցիալական ցանցերում (Facebook - Zvartnots Renaissance Foundation անվանումով)արդեն պատրաստի ունի հայ դասական, ժողովրդական, հոգևոր և Կոմիտասի երգերի բառերը, և՝ երգի նոտաները և՝ MP3-իտարբերակը: Մասնակիցը կունենա ընտրության մեծ հնարավորություն, իսկ ցանկության դեպքում, կներկայացնի հայտ և կստանա դեռևս կայքում չներգրավված երգ:

❖ Հայտ ներակայացնելու կարգը

1. Մասնակիցները հայտերը ներկայացնում են՝ zvartrenfoundation@gmail.com էլ. հասցեին:
2. Հայտի հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը
3. Անձնագրի պատճեն կամ ծննդյան վկայական
4. 1-ին մրցույթային փուլ անցած 30-36 մասնակիցները վճարում են մասնակցության վճար՝ 10.000 ՀՀ դրամ:

Մրցույթ-փառատոնի ժյուրիի կազմ՝

1. Դավիթ Ղազարյան – ՀՀ վաստակավոր գործիչ, ԵՊԿ պրոֆեսոր, Հայաստանի երգչախմբային ընկերության պատվավոր նախագահ,
2. Սուսաննա Մարտիրոսյան – ԵՊԿ մեներգեցողության թիվ 1 ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, միջազգային մրցույթների դափնեկիր
3. Ռեբեկա Օջախյան– ԵՊԿ պրոֆեսոր,միջազգային մրցույթների դափնեկիր
4. Կարինե Մկրտչյան - ԵՊԿ պրոֆեսոր,միջազգային մրցույթների դափնեկիր
5. Սամվել Գալստյան – ԵՊԿ պրոֆեսոր, միջազգային մրցույթների դափնեկիր
6. Երվանդ Երզնկյան - ԵՊԿ պրոֆեսոր

Համագործակցողներ՝

Հայ Առաքելական Եկեղեցի

ՀՀ Մշակույթի նախարարություն

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Սփյուռքում –հայկական համայնքներ, ՀԿ, Դեսպանատներ

Մրցույթ-փառատոնն անցկացվում է 7 փուլերով՝

1. Լսումներ - (լսումները տեղի են ունենում տվյալ մարզում, Երևանում): Լսումներին մասնակիցը ներկայացնում է 3 երգ՝ ակապելլա իր ցանկությամբ: Ժյուրին ստուգում է ձայնային տվյալները: Լսումները գնահատվում են դրական կամ բացասական: Լսումներ անցած մասնակիցները ժյուրիի կողմից կբաժանվեն ըստ անվանակարգերի:

2. 1-ին մրցութային փուլ – 1-ին մրցութային փուլին մասնակիցը ներկայացնում է 2 ստեղծագործություն՝ ակապելլա: 1-ին մրցույթային փուլ անցած ամեն մարզի և Երևան քաղաքի վարչական շրջանների մասնակիցներին ժյուրին գնահատում է 1 – 10 բալանի սանդղակում: Հաջորդ 2-րդ մրցույթային փուլ են անցնում ամեն մարզից և Երևան քաղաքի վարչական շրջանների 3 անվանակարգից և տարիքային խմբից՝ ամենաբարձր գնահատական ստացած 30 մասնակից:

3. Ոչ ֆորմալ դասընթաց – ամեն մարզի և Երևան քաղաքի վարչական շրջաններից անցած 30 մասնակիցների հետ անցկացվում է ոչ ֆորմալ դասընթաց՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսորների կողմից:

4. Լավագույն տասնյակ – 2-րդ մրցութային փուլին մասնակիցը ներկայացնում է 2 ստեղծագործություն՝ նվագակցությամբ, մինուսներով: 2-րդ մրցույթային փուլ անցած ամեն մարզի և Երևան քաղաքի ամեն վարչական շրջանի մասնակիցներին ժյուրին գնահատում է 1 – 10 բալանի սանդղակում: Եզրափակիչ փուլ են անցնում ամեն մարզից և Երևան քաղաքի վարչական շրջանների 3 անվանակարգից և տարիքային խմբից՝ ամենաբարձր գնահատական ստացած 10 մասնակից: Ընտրվում է ամեն մարզի և Երևան քաղաքի ամեն վարչական շրջանների լավագույն տասնյակը:

5. Ոչ ֆորմալ դասընթաց – ամեն մարզի և Երևան քաղաքի վարչական շրջաններից անցած լավագույն տասնյակի հետ անցկացվում է ոչ ֆորմալ դասընթաց՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսորների կողմից:

6. Եզրափակիչ փուլ (Հանրապետական փուլ) – եզրափակիչ փուլ են անցնում ամեն մարզի և Երևան քաղաքի ամեն վարչական շրջանի լավագույն տասնյակները:

7. Մրցանակաբաշխություն և գալա համերգ –հայտարարվում են յուրաքանչյուր անվանակարգի և տարիքային խմբի 1,2 և 3-րդ տեղ զբաղեցրած մրցանակակիրները և Գրան Պրին: Մրցանակաբաշխությանը կհաջորդի Գալլա համերգը մրցանակակիրների մասնակցությամբ: Գալլա համերգի մասնակիցները ելույթ կունենան նաև տվյալ ժանրի հայտնի արտիստների հետ:

- «Զվարթնոց» հայ երգի մրցույթ-փառատոնի ծրագիր
- Լսումներ

Մասնակիցը ներկայացնում է ակապելլա երեք ստեղծագործություն՝ իր ցանկությամբ:

- *1-ին մրցութային փուլ*

Մասնակիցը ներկայացնում է՝ ակապելա

✓ Հայ դասական ժանր – 1 Կոմիտաս
2 Հայ կոմպոզիտորական

✓ Հայ ժողովրդական ժանր – 1 Կոմիտաս
2 Ժողովրդական, աշուղական, գուսանական, ազգագրական

✓ Էստրադային ժանր – 1 Կոմիտաս
2 Շարլ Ազնավուրի երգացանկից, կամ Հայ կոմպոզիտորական

- *2-րդ մրցույթային փուլ*

Մասնակիցը ներկայացնում է՝ ակապելլա

✓ Հայ դասական ժանր – 1 Կոմիտաս
2 Հայ կոմպոզիտորական

✓ Հայ ժողովրդական ժանր – 1 Կոմիտաս
2 Ժողովրդական, աշուղական, գուսանական, ազգագրական

✓ Էստրադային ժանր – 1 Կոմիտաս
2 Շարլ Ազնավուրի երգացանկից, Հայ կոմպոզիտորական

- *Մարզային /վարչական/ լավագույն տասնյակ*

Մասնակիցը ներկայացնում է՝ նվագակցությամբ, մինուսով

✓ Հայ դասական ժանր – 1 Կոմիտաս
2 Հայ կոմպոզիտորական – 2 ստեղծագործություն

✓ Հայ ժողովրդական ժանր – 1 Կոմիտաս
2 Ժողովրդական, աշուղական, գուսանական, ազգագրական - 2 ստեղծագործություն

✓ Էստրադային ժանր – 1 Կոմիտաս
2 Շարլ Ազնավուրի երգացանկից, 1ստեղծագործություն Հայ կոմպոզիտորական

- *Եզրափակիչ փուլ*

✓ Հայ դասական ժանր – 1 Կոմիտաս
2.Հայ կոմպոզիտորական– 2 ստեղծագործություն

✓ Հայ ժողովրդական ժանր – 1.Կոմիտաս
2. Ժողովրդական, աշուղական, գուսանական, ազգագրական - 2 ստեղծագործություն

✓ Էստրադային ժանր – 1. Կոմիտաս

2. Շարլ Ազնավուրի երգացանկից, Ստեղծագործություն Հայ կոմպոզիտորական

«Զվարթնոց» հայ երգի մրցույթ-փառատոնի

Հայտ

Անուն, ազգանուն, հայրանուն _____

Ծննդյան օր, ամիս,թիվ _____

Մարզ, Համայնք _____

Մասնակցի հասցեն (փոստային, էլեկտրոնային) _____

Հեռախոսը, բջջ. _____

Մասնակցի աշխատանքի կամ ուսումնական հաստատության անվանումը

_____

_____

Մասնակցի աշխատանքի կամ ուսումնական հաստատության հեռախոսը

_____

Մանկավարժի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը, հեռախոսը _____

_____

_____

_____

_____

Կատարվող ծրագիրը _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Հաստատության ղեկավարի անունը, ազգանունը _____

ստորագրությունը,կնիքը